



Արմենիա
Ինչորանս

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍԴԸ խորհրդի
«27» ապրիլի 2026թ. թիվ 27 որոշմամբ

ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ք. Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
ԲԱԺԻՆ 2.	ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	3
ԲԱԺԻՆ 3.	ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ	4
ԲԱԺԻՆ 4.	ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ	5
ԲԱԺԻՆ 5.	ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԴԵՊՔԵՐ.....	6
ԲԱԺԻՆ 6.	ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ	8
ԲԱԺԻՆ 7.	ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ.....	9
ԲԱԺԻՆ 8.	ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ.....	10
ԲԱԺԻՆ 9.	ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄ	11
ԲԱԺԻՆ 10.	ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..	11
ԲԱԺԻՆ 11.	ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ/ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ.....	13
ԲԱԺԻՆ 12.	ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄԸ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻՑ ՀԵՏՈ	14
ԲԱԺԻՆ 13.	ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳ	16
ԲԱԺԻՆ 14.	ՉՀԱՏՈՒՅՎՈՂ ԳՈՒՄԱՐ.....	18
ԲԱԺԻՆ 15.	ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՅՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՅԻԱ)	18
ԲԱԺԻՆ 16.	ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)	19
ԲԱԺԻՆ 17.	ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ	19
ԲԱԺԻՆ 18.	ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ.....	21

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն «Աջակցության ապահովագրության կանոնները» (այսուհետ՝ Կանոններ) մշակված են Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2. Աջակցության ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Աջակցության ապահովագրություն» դասի մեջ:

1.3. Կանոնները հանդիսանում են աջակցության ապահովագրության պայմանագրի և/կամ վկայագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը: Պայմանագիրը կարող է բովանդակել կողմերի փոխադարձ համաձայնությամբ որոշված այլ պայմաններ, որոնք, սակայն, չպետք է հակասեն Կանոններին, ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին:

1.4. Կանոններով սահմանված պայմանները կարող են փոփոխվել (լրացվել, ուժը կորցրած ճանաչվել) միայն Ապահովագրողի խորհրդի որոշմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

1.5. Կանոնները հրապարակային փաստաթուղթ է և տեղադրված է Ապահովագրողի www.armeniainsurance.am պաշտոնական ինտերնետային կայքում:

1.6. Կանոնների համաձայն Ապահովագրողը, գործելով օրենքի, իրավական ակտերի և իր կանոնադրության համաձայն, Ապահովադիրների հետ կնքում է Պայմանագիր:

1.7. Կանոնների համաձայն Ապահովագրողը պարտավորվում է Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրին (Ապահովագրված անձին, Շահառուին) Կանոններով սահմանված կարգով հատուցել Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարն ամբողջությամբ կամ նրա մի մասը՝ կախված պատճառված վնասի չափից և Պայմանագրի պայմաններից:

1.8. Կանոններով Ապահովադիր կարող է հանդիսանալ՝

1.8.1. գործունակ ֆիզիկական անձը,

1.8.2. իրավաբանական անձը,

1.8.3. պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը,

1.8.4. միջազգային կազմակերպությունը,

1.8.5. դեսպանությունը, հյուպատոսությունը:

1.9. Պայմանագիրը կարող է կնքվել ինչպես Ապահովադիր հանդիսացող ֆիզիկական անձի օգտին, այնպես էլ այլ ֆիզիկական անձանց օգտին (այսուհետ՝ Ապահովագրված անձ կամ Շահառու):

1.10. Ապահովագրված անձ կարող է հանդիսանալ 85 տարեկանը չլրացած ֆիզիկական անձը:

ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Կանոններում կիրառվող անվանումներն ու հասկացությունները որոշ դեպքերում հատուկ պարզաբանվում են համապատասխան սահմանումներով: Եթե որևէ անվանման կամ հասկացության նշանակությունը պարզաբանված չէ Կանոններում և չի կարող պարզաբանվել օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ ակտերով, ապա նման անվանումը կամ հասկացությունը պարզաբանվում է տառացի և բառացի նշանակությամբ:

2.2. Կանոններում գործածվող հիմնական հասկացություններն են.

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

2.2.1. *Ապահովագրող*՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.

2.2.2. *Ապահովադիր*՝ Ապահովագրողի հետ ապահովագրության Պայմանագիր կնքած գործունակ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, միջազգային կազմակերպություն, դեսպանատուն, հյուպատոսարան.

2.2.3. *Ապահովագրված անձ*՝ Պայմանագրում նշված ֆիզիկական անձ, որի հետ տեղի ունեցած պատահարը կարող է դիտարկվել որպես Պայմանագրի առարկա.

2.2.4. *Ապահովագրական գումար*՝ Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ.

2.2.5. *Ապահովագրական սակագին*՝ սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ.

2.2.6. *Ապահովագրավճար*՝ Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադիր կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար.

2.2.7. *Ապահովագրական պատահար*՝ Պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադիրին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում.

2.2.8. *Չհատուցվող գումար*՝ վնասի հատուցմանը (վնասի վերականգնմանը) Ապահովադիր մասնակցության չափը, որը սահմանվում է Պայմանագրով՝ կոնկրետ գումարի կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Պայմանագրով կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար.

2.2.9. *Դժբախտ պատահար*՝ Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրված անձի կամքից անկախ տեղի ունեցած հանկարծակի, պատահական, անսպասելի, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ տևողությամբ), ոչ կենսաբանական, արտաքին ազդեցություն ունեցող իրադարձություն (դեպք), որի հետևանքով առաջանում է Ապահովագրված անձի աշխատունակության ժամանակավոր և/կամ մշտական կորուստ և/կամ մահ.

2.2.10. *Հանկարծակի հիվանդություն*՝ ապահովագրության գործողության ժամկետի ընթացքում ապահովագրության տարածքում անսպասելի առաջացած և անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող հիվանդություն.

2.2.11. *Ապասարկող ընկերություն*՝ մասնագիտացված ընկերություն, որի հեռախոսահամարները նշված են Պայմանագրում և որն Ապահովագրողի հանձնարարությամբ շուրջօրյա ապահովում է Պայմաններով նախատեսված ծառայությունների կազմակերպումը.

2.2.12. *Պայմանական միավոր (պ/մ)*՝ Շենգենյան տարածքում ներառված երկրներում տեղի ունեցած պատահարի համար ապահովագրական հատուցման վճարման միջոց՝ պ/մ է համարվում եվրոյին համարժեք ՀՀ դրամը, իսկ Շենգենյան տարածքից դուրս գտնվող երկրներին համար, անկախ տվյալ երկրի ազգային արժույթից, ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

3.1. Կանոնների համաձայն կնքված Պայմանագրով ապահովագրության օբյեկտն Ապահովագրված անձի գույքային շահերն են՝ կապված պատահարի տեղի ունենալու հետևանքով Ապահովագրված անձի անհետաձգելի բժշկական, բուժօրհանսպորտային օգնության և այլ ծառայությունների ստացման հետ:

3.2. Կանոնների համաձայն ապահովագրության տարածք է համարվում Պայմանագրում սահմանված տարածքը:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

4.1. Կանոնների համաձայն՝ ապահովագրական դիսկն այն իրադարձությունն է, որն ունի առաջացման որոշակի հավանականություն և կարող է առաջանալ պատահականորեն, հանկարծակի, որի համար տրամադրվում է ապահովագրական ծածկույթ:

4.2. Աջակցության ապահովագրության ապահովագրական ծածկույթը ներառում է.

4.2.1. անհետաձգելի շտապ բուժօգնության հետ կապված ծախսերը, այդ թվում.

4.2.1.1. անհետաձգելի հիվանդանոցային բուժման ծախսերը, ներառյալ՝ Ապահովագրված անձին բուժող բժշկի կողմից նշանակված/կատարված ախտորոշիչ հետազոտությունների, միջամտությունների, շտապ անհետաձգելի վիրահատությունների և նշանակված դեղորայքի, վիրակապական և ֆիքսող պարագաների (գիպս, բանդաժ (կալանդ), ֆիքսատոր (սևեռիչ) և այլն), ստանդարտ տիպի հիվանդասենյակի ծախսերը.

4.2.1.2. անհետաձգելի արտահիվանդանոցային բուժման ծախսերը, ներառյալ՝ Ապահովագրված անձին բուժող բժշկի կողմից նշանակված/կատարված ախտորոշիչ հետազոտությունների, նշանակված դեղորայքի, վիրակապական և ֆիքսող պարագաների (գիպս, բանդաժ (կալանդ), ֆիքսատոր (սևեռիչ) և այլն) ծախսերը.

4.2.1.3. ատամնաբուժական ծախսերը, որոնք կապված են ատամի և/կամ հարատամային հյուսվածքների սուր բորբոքային (աբսցես (թարախակույտ), պերիօստիտ (շրջոսկրաբորբ) և այլն) հիվանդության հետ և պահանջում են վիրաբուժական միջամտություն, ռենտգեն հետազոտության, ատամների հեռացում և/կամ ներվազրկում և/կամ պլոմբավորում.

4.2.2. բուժօրանսպորտային ծառայությունների տրամադրման ծախսերը, այդ թվում.

4.2.2.1. բժիշկ-մասնագետի հրավիրման հետ կապված ծախսերը, որոնք հատուցվում են այն դեպքում, երբ տվյալ տարածքում բուժումն անհնար է, և, միևնույն ժամանակ, Ապահովագրված անձի տեղափոխումն այլ տարածք անհնար է կամ բժշկի կողմից հակացուցվում է.

4.2.2.2. Ապահովագրված անձին Ապահովագրական պատահարի վայրից շտապ (անհետաձգելի) բժշկական օգնություն տրամադրելու համար տրանսպորտային միջոցով (բացառությամբ՝ օդային) մոտակա բժշկական հաստատություն տեղափոխելու ծախսը.

4.2.2.3. Ապահովագրված անձին բուժող բժշկի ցուցմամբ տրանսպորտային միջոցով (բացառությամբ՝ օդային) այլ բժշկական հաստատություն տեղափոխելու ծախսը.

4.2.2.4. ՀՀ-ից Ապահովագրված անձի հարազատներից որևէ մեկի՝ էկոնոմ դասի երկկողմանի ավիատոմսի ծախսը դեպի ապահովագրության տարածք, եթե Ապահովագրված անձը գտնվում է այնպիսի վիճակում, որի դեպքում, համաձայն բժշկի ցուցման, ունի խնամողի կարիք և վերջինիս հետ չկա նման գործողություններ իրականացնող անձ, կամ տեղում կազմակերպված խնամակալական ծառայության (խնամքի ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող կազմակերպության) մատուցման համար ծախսը.

4.2.2.5. Ապահովագրության տարածքում Ապահովագրված անձի խնամքի տակ գտնվող անձանց և մինչև 18 տարեկան երեխաների վերադարձը նրանց մշտական բնակության վայր՝ ապահովելով էկոնոմ դասի ավիատոմսեր, կամ արդեն իսկ առկա ավիատոմսերի ամսաթվի փոփոխման հետ կապված ծախսը՝ անհրաժեշտության դեպքում ապահովելով ուղեկցող մինչև մոտակա օդանավակայան, որոնք հատուցվում են այն դեպքում, երբ Ապահովագրված անձը գտնվում է այնպիսի առողջական վիճակում, որը թույլ չի տալիս իր հետ և իր խնամքի տակ գտնվող անձանց և երեխաների նկատմամբ իրականացնել խնամք, կամ երբ Ապահովագրված

անձը մահացել է և վերջինիս խնամքի տակ գտնվող անձինք ու երեխաները տվյալ երկրում մնացել են առանց խնամողի.

4.2.3. հայրենադարձության ծախսերը.

4.2.3.1. Ապահովագրված անձին բուժող բժշկի ցուցմամբ Ապահովագրված անձի հայրենադարձության ծախսը, որը ներառում է վերջինիս՝ դեպի իր բնակության վայր հետադարձ ավիատոմսի ամսաթվի փոփոխման ծախսը՝ ավիատոմսի առկայության դեպքում, իսկ հակառակ դեպքում՝ նոր էկոնոմ դասի ավիատոմսի արժեքը.

4.2.3.2. Ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված անձի մահվան դեպքում վերջինիս աճյունի վերադարձը նրա մշտական բնակության վայր (ռեպատրիացիա).

4.2.4. Իրավաբանական խորհրդատվության կազմակերպման աջակցության ծախսերը՝

4.2.4.1. Ապահովագրողը կամ Աջակցող ընկերությունը միջնորդում է, որպեսզի Ապահովագրված անձը կարողանա ստանալ իրավաբանի խորհրդատվություն, եթե նման անհրաժեշտությունն առաջացել է Ապահովագրական պատահարի հետևանքով, որի համար վճարները կատարվում են Ապահովագրված անձի միջոցներով:

4.3. Կանոնների 4.2 կետում դիտարկված դեպքերը համարվում են Ապահովագրական պատահար և հատուցման ենթակա են, եթե դրանք տեղի են ունեցել Ապահովագրված անձի հետ, Պայմանագրում և Կանոններում նշված ապահովագրության տարածքում գտնվելու ժամանակ և Պայմանագրի գործողության ընթացքում:

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ԶՀԱՄԱՐՎՈՂ ԴԵՊԹԵՐ

5.1. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, Ապահովագրական պատահարներ չեն համարվում և հատուցման ենթակա չեն.

5.1.1. Ապահովագրված անձի մոտ մինչ ապահովագրության ժամկետի սկիզբն առկա հիվանդության հետևանքով առողջական վիճակի վատթարացումը, քրոնիկ հիվանդությունները և/կամ նրանց սրացումները, նախկինում տեղի ունեցած պաթոլոգիաների (հիվանդությունների) հետևանքով առաջացած վիճակները և/կամ դրանց բարդությունները՝ անկախ դրանց առաջին անգամ ի հայտ գալու ժամկետից և դրանց կապակցությամբ նախկինում բուժում ստանալու փաստից (բացառությամբ՝ Կանոնների 13.1.3 կետով նախատեսված դրույթի), ինչպես նաև հիվանդությունները, որոնց առկայության դեպքում ճանապարհորդությունը հակացուցված է եղել Ապահովագրված անձին և/կամ կարող էր խորացնել հիվանդության ընթացքը (պատճառ հանդիսանալ դրա սրացման համար), ինչպես նաև սույն կետում թվարկված վիճակներով պայմանավորված մահը.

5.1.2. վեներական կամ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները (հետազոտություններ, այդ թվում՝ հայտնաբերմանն ուղղված, և բուժում).

5.1.3. ուղեղի արյան շրջանառության խանգարումները.

5.1.4. սրտի կաթվածը, սրտի իշեմիկ հիվանդությունը, սրտի ռիթմի խանգարումները և դրանց հետևանքներն ու սրացումները.

5.1.5. կոման.

5.1.6. ողնաշարաբանությունը՝ ողնաշարի ճողվածքներ, օստեոխոնդրոզ, օստեոպենիա (ոսկրագոյացման խանգարում), օստեոպորոզ (ոսկրաձակոտկենություն), սկոլիոզ (կողմնաձողում), կիֆոզ (սապատ) և ողնաշարի դեգեներատիվ (կազմափոխական) դիստրոֆիկ (սնուցախանգարումով պայմանավորված) փոփոխություն, այդ թվում՝ դրանց հետևանքով առաջացած հիվանդություններ.

5.1.7. հոգեկան հիվանդությունները, էպիլեպսիան (ընկնավորությունը)՝ առաջնային և սիմպտոմատիկ, և դրանց սրացումները՝ անկախ այն բանից, թե Ապահովագրված անձը գիտեր դրանց մասին մինչ ճանապարհորդությունը, թե ոչ, պահվածքի խանգարումները, այդ թվում՝ ակոհոլամոլություն, թմրամոլություն, վնասակար սովորություններ, ինչպես նաև դրանց հետ կապված տրավմատիկ վնասվածքներ.

5.1.8. ուռուցքային հիվանդությունները՝ բարորակ և չարորակ.

5.1.9. ուլտրամանուշակագույն ճառագայթների հետևանքով առաջացած արևահարումները և մաշկային ծածկույթի սուր այլ փոփոխությունները, ինչպես նաև սնկային և մաշկաբանական հիվանդությունները (բացառությամբ՝ վարակիչ հիվանդությունների), այդ թվում՝ ալերգիկ (բացառությամբ՝ Կվինկեյի այտուցի) և սննդային դերմատիտները (մաշկաբորբները).

5.1.10. ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ը, վիրուսային հեպատիտները (յարդաբորբները), այլ տեսակի վիրուսակրությունը և պարազիտակրությունը, ինչպես նաև դրանց հետևանքները և սրացումները.

5.1.11. հղիության հետ կապված ցանկացած պաթոլոգիաները (ախտաբանությունը).

5.1.12. հղիության ընդհատումը, որը կապված չէ Ապահովագրական պատահարի հետ.

5.1.13. էնդոկրին համակարգի հիվանդությունները, այդ թվում՝ շաքարախտ, և դրանց բարդությունները.

5.1.14. Պայմանագրում և Կանոններում նշված ապահովագրության տարածքում կանխամտածված նպատակային բուժում ստանալու դեպքերը.

5.1.15. Ապահովագրված անձի կողմից ինքնասպանությունը կամ մահափորձը, իրեն հասցված կանխամտածված մարմնական վնասվածքները.

5.1.16. ալկոհոլի, թմրադեղերի, տոքսիկ նյութերի կամ այլ նյութերի չթույլատրված օգտագործման հետևանքով Ապահովագրված անձի առողջության վատթարացումները.

5.1.17. ալկոհոլի, թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի ազդեցության տակ գտնվող Ապահովագրված անձի կամ այլ անձի կողմից և/կամ առանց վարորդական թույլտվության տրանսպորտային միջոց վարելիս ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով առաջացած վնասները.

5.1.18. Ապահովագրի (Ապահովագրված անձի) ցանկացած մարզաձևով զբաղվելու, մասնագիտական և սիրողական մակարդակով մարզումներին, մարզական միջոցառումներին, մրցումներին մասնակցելու, ինչպես նաև հանգիստն ակտիվ անցկացնելու հետևանքով առաջացած վնասները.

5.1.19. Ապահովագրված անձի առողջական վիճակին հասցված վնասը (առողջական վիճակի վատթարացումը) կամ մահը, որը կապված է (հայտարարված կամ չհայտարարված) պատերազմական գործողությունների և դրանց հետևանքների, ռազմական գործողությունների, ահաբեկչական գործողությունների, քաղաքացիական անկարգությունների և պատերազմների, տարատեսակ ժողովրդական հուզումների և գործադուլների, ատոմային պայթյունի ուղղակի կամ անուղղակի ազդեցության, ռադիացիայի կամ ռադիոակտիվ վարակման հետ.

5.1.20. հայրենադարձության համար կատարված ծախսերն աննշան, ոչ էական վնասվածքների և հիվանդությունների դեպքում, որոնք Ապահովագրողի կողմից նշանակված բժշկական խորհրդատուի կարծիքով ենթակա են բուժման տեղում և չեն խոչընդոտում Ապահովագրված անձի ճանապարհորդության հետագա շարունակմանը.

5.1.21. Ապահովագրողի կողմից չկազմակերպված կամ Ապահովագրողի հետ չհամաձայնեցված հայրենադարձության համար կատարված ցանկացած ծախսերը, ինչպես նաև

ծախսերը, որոնք առաջանում են Ապահովագրված անձի՝ մշտական բնակության երկիր գնալուց կամավոր հրաժարումից.

5.1.22. պլաստիկ և վերականգնողական վիրաբուժության և տարբեր տեսակի պրոթեզավորման, ներառյալ՝ աչքի և ատամի, ինչպես նաև սրտի և անոթների (աորտակորոնար շունտավորում, աորտայի վրա կատարվող վիրահատություններ, շունտավորում, ստենտավորում, սրտի ռիթմը կարգավորող, վարող սարքերի տեղադրման, սրտի փականների պլաստիկա, պրոթեզավորում, կորոնարոանգիոգրաֆիա), ինչպես նաև սրտի հետ կապված և/կամ այլ վիրաբուժական միջամտությունների ծախսերը, նույնիսկ դրանց իրականացման համար բժշկական ցուցման եզրակացության առկայության պարագայում.

5.1.23. Ապահովագրողի կողմից նշանակված բժշկական խորհրդատուի կարծիքով բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չհամարվող և/կամ բժշկի կողմից չնշանակված/չցուցված բուժական միջոցառումների իրականացման հետ կապված ծախսերը, բժշկի ցուցումներին չհետևելու արդյունքում առաջացած ծախսերը.

5.1.24. ոչ ավանդական (ժողովրդական բժշկության) մեթոդներով բուժման հետ կապված ծախսերը.

5.1.25. առողջարանակուրորտային և առողջարանային ծախսերը.

5.1.26. ցանկացած կանխարգելիչ հետազոտության, բժշկական ընդհանուր կանխարգելիչ զննության, ինչպես նաև կանխարգելիչ պատվաստումների հետ կապված ծախսերը.

5.1.27. ցանկացած երկրի զինված ուժերում Ապահովագրված անձի ռազմական ծառայության կամ կազմավորումներում մասնակցելու հետևանքով կատարված ծախսերը.

5.1.28. ոչ բժշկական բնույթի ծախսերը, օրինակ՝ հեռախոսազանգի համար վճարները, բացառությամբ՝ Ապահովագրական պատահարով պայմանավորված Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին կատարված հեռախոսազանգերի և/կամ ֆաքսիմիլային հաղորդագրությունների համար վճարները.

5.1.29. ծախսերը, որոնք կապված են համապատասխան արտոնագիր չունեցող բժշկական հաստատության (բժշկի) կողմից ծառայության մատուցման հետ, կամ երբ բժշկական օգնության տրամադրման պահին բժշկական հաստատության (բժշկի) լիցենզիայի գործողությունը դադարեցված կամ կասեցված է.

5.1.30. հիվանդանոցային, բժշկի կամ բուժքրոջ ծառայությունները, որոնք դիագնոստիկայի և բուժման համար պարտադիր չեն համարվում.

5.1.31. վերականգնողական և բուժական թերապիան, ֆիզիոթերապիան.

5.1.32. այն հոսպիտալացման և հետազոտությունների ծախսերը, որոնց չի հաջորդում որևէ բժշկական օգնություն կամ բուժում.

5.1.33. ոչ բուժօրանսպորտային ծախսերը, ներառյալ՝ մեքենա, տաքսի և հասարակական տրանսպորտ:

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

6.1. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

6.2. Պայմանագրով Ապահովագրական գումարը կարող է սահմանված լինել ինչպես Ապահովագրված անձի հաշվով մեկ ընդհանուր գումարի տեսքով, այնպես էլ առանձին տեսակի վնասվածքների կամ ծախսերի համար առանձին-առանձին ենթագումարներով:

6.3. Պայմանագրով կարող է սահմանվել յուրաքանչյուր ապահովագրական հատուցման իրականացման կամ առանձին տեսակի վնասվածքների համար ապահովագրական հատուցման իրականացման առավելագույն չեմ մեկ ապահովագրական պատահարի համար:

6.4. Վճարվող ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել տվյալ պահին գործող Ապահովագրական գումարի չափը:

6.5. Ապահովագրական գումարը նվազում է իրականացված ապահովագրական հատուցման չափով:

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

7.1. Ապահովագրավճարի վճարման կարգը և ձևը որոշվում են Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ և սահմանվում են Պայմանագրով:

7.2. Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից Պայմանագրի ողջ ժամկետի համար Ապահովագրական սակագնի հիման վրա, որը ձևավորվում է, ելնելով Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, Չհատուցվող գումարի տեսակից ու մեծությունից, Պայմանագրի գործողության ժամկետից և ապահովագրական ռիսկի վրա ազդող այլ գործոններից:

7.3. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից Պայմանագրի համաձայն կարող է վճարվել միանվագ՝ (միանգամյա մուծումով) ապահովագրության ողջ ժամկետի համար, կամ մաս-մաս՝ համաձայն Պայմանագրով սահմանված ժամանակացույցի:

7.4. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են անկանխիկ վճարվել Ապահովագրողի համապատասխան հաշվարկային հաշվին:

7.5. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

7.6. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն ապահովագրավճարի վճարման համար կարող է սահմանել լրացուցիչ ժամկետ՝ այդ մասին եռօրյա ժամկետում գրավոր կամ բանավոր ծանուցելով Ապահովադրին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ծանուցման մեջ պետք է նշվեն լրացուցիչ ժամկետի ընթացքում ապահովագրավճարի չվճարման իրավական հետևանքները:

7.7. Եթե լրացուցիչ ժամկետի ընթացքում Ապահովադիրը չի վճարում ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց Ապահովադրին այդ մասին ծանուցելու: Այս դեպքում Ապահովադրի կողմից նախապես Պայմանագրի համար վճարված ապահովագրավճարը չի վերադարձվում:

7.8. Եթե Ապահովագրական պատահարն առաջացել է լրացուցիչ ժամկետի ավարտից հետո, և Ապահովադիրը չի վճարել ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցել կետանցված ապահովագրավճարի չափը կամ ընդհանրապես հրաժարվել ապահովագրական հատուցումը վճարելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովադիրն ապացուցում է, որ ապահովագրավճարը չի վճարվել իրենից անկախ հանգամանքների պատճառով:

7.9. Եթե մինչև Պայմանագրով սահմանված ժամկետի հաջորդ օրը միանվագ կամ հերթական (սկսած երկրորդից) ապահովագրավճարը չի վճարվել կամ վճարվել է Պայմանագրով նախատեսվածից քիչ, ապա Պայմանագրով նախատեսված

ապահովագրությունը չի տարածվի այն ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրով, որպես վճարման վերջին օր նախատեսված օրվա ժ.23:59-ից մինչև պարտավորության գումարի վճարման ամսաթվի ժ.23:59-ը:

ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

8.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի միջև սահմանված ձևով ձեռք բերված համաձայնություն է, ըստ որի՝ Ապահովագրողն ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և Կանոններով սահմանված դեպքերում և կարգով Ապահովադրին (Շահառուին) տրամադրել ապահովագրական հատուցում:

8.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի բանավոր կամ գրավոր դիմումի, ներառյալ՝ համապատասխան էլեկտրոնային միջավայրում կատարված հարցման, հիման վրա: Ընդ որում, Պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել ինչպես Կողմերի ստորագրությամբ, ներառյալ՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, մեկ փաստաթուղթ կազմելու, այնպես էլ հետևյալ եղանակներին՝ որևէ մեկով.

8.2.1. փոստային, հեռագրային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է Պայմանագրի կողմից: Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով Պայմանագիր կնքելիս էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ անձի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը.

8.2.2. Ապահովագրողի կողմից համապատասխան տեխնիկական հնարավորություններ ներդրված լինելու դեպքում՝ ինտերնետային կայքի, վճարային համակարգերի, տերմինալների միջոցով և բջջային հավելվածներով: Սույն ենթակետով նշված եղանակով Պայմանագիր կնքվելու դեպքում Ապահովադրին նույնականացնող տվյալները համապատասխան էլեկտրոնային համակարգում մուտքագրվելու և դրան ի պատասխան՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին Պայմանագրի էլեկտրոնային տարբերակի ստացման ուժով համարվում է, որ տվյալ Պայմանագիրը կնքվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով, որը հնարավորություն է տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է Պայմանագրի կողմից, և որի դեպքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված Պայմանագիրն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ Կողմերի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը.

8.2.3. օրենքով չարգելված այլ եղանակներով:

8.3. Պայմանագիրը կարող է կնքվել Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ նվազագույնը 3 օր և առավելագույնը 1 տարի ժամկետով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Պայմանագրի կնքման պահին Ապահովագրված անձը պետք է գտնվի ՀՀ տարածքում (բացառությամբ՝ Պայմանագրի ավարտով պայմանավորված դրա վերակնքման դեպքի):

8.4. Երեսուն օր և ավել ժամկետով Պայմանագրի կնքման դեպքում Ապահովագրողը պատասխանատվություն է կրում միայն այնքան օրերի համար, որքան նշված է Պայմանագրի «Օրեր» սյունակում: Յուրաքանչյուր ապահովագրության տարածք մեկնելու դեպքում Պայմանագրի «Օրեր» սյունակում նշված ապահովագրության ժամկետն ինքնաշխատ կերպով նվազեցվում է ապահովագրության տարածքում անցկացրած ժամկետի օրերի քանակով: Ընդ որում, Ապահովագրողի պատասխանատվությունը դադարում է «Օրեր» սյունակում սահմանված ժամկետի ավարտմամբ:

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

8.5. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ոչ շուտ, քան կնքման օրվան հաջորդող օրը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

8.6. Պայմանագիրը գործում է Պայմանագրում նշված երկրներում, բացառությամբ՝ Ապահովագրված անձի մշտական ապրելավայր հանդիսացող երկրների և այն երկրների, որոնց քաղաքացին է համարվում Ապահովագրված անձը:

8.7. Պայմանագրի կորստի դեպքում Ապահովագրողն Ապահովադրի դիմումի համաձայն տալիս է կրկնօրինակ, որից հետո կորցրած օրինակը համարվում է անվավեր: Ապահովագրողը կարող է Ապահովադրից գանձել Պայմանագրի կրկնօրինակի պատրաստման և ձևակերպման համար կատարված ծախսերի գումարը:

ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄ

9.1. Պայմանագրի գործողությունը դադարում է՝

9.1.1. Պայմանագրի կողմերի համաձայնությամբ,

9.1.2. Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո,

9.1.3. Ապահովագրողի կողմից Կանոնների և դրանց հիման վրա կնքված Պայմանագրի համաձայն իր պարտավորությունները լրիվ ծավալով կատարելուց հետո,

9.1.4. օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողի լուծարման դեպքում, եթե տվյալ ապահովագրական ռիսկը, Ապահովադրի համաձայնությամբ, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով չի փոխանցվում այլ ապահովագրական ընկերության,

9.1.5. օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

9.2. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը:

9.3. Պայմանագրի ժամկետի գործողության մեջ մտնելուց հետո Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից Պայմանագրից հրաժարվելու դեպքում, Ապահովագրողին վճարված ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն: Ապահովադրի (Ապահովագրված անձի) պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրն չեն վերադարձվում վճարված ապահովագրավճարները:

9.4. Մինչև ապահովագրության ժամկետի գործողության մեջ մտնելը Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից Պայմանագրից գրավոր հրաժարվելու դեպքում, Ապահովագրողին վճարված ապահովագրավճարները ենթակա են վերադարձման վճարված ապահովագրավճարի 85 %-ի չափով:

9.5. Ապահովադրի ցանկությամբ Պայմանագրի դադարեցման դեպքում, Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել Պայմանագրի բնօրինակը և երկրորդ օրինակը, հակառակ դեպքում՝ Ապահովագրողին վճարված ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն:

ԲԱԺԻՆ 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1. **Ապահովադիրն իրավունք ունի՝**

10.1.1. ստանալ տեղեկատվություն Ապահովագրողի մասին՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ծավալով, պայմաններով և կարգով,

10.1.2. Ապահովագրողից ստանալ խորհրդատվություն Կանոնների և Պայմանագրի կետերի վերաբերյալ,

10.1.3. ստանալ Կանոնները, որոնց հիման վրա կնքվում է Պայմանագիրը,

10.1.4. պահանջել Ապահովագրողից վճարել Շահառուին ապահովագրական հատուցում՝ պատահարն ապահովագրական ճանաչվելու դեպքում, Պայմանագրի պայմաններով սահմանված ծավալով և կարգով,

10.1.5. սույն Կանոնների և ՀՀ օրենսդրության համաձայն վաղաժամկետ լուծել Պայմանագիրը,

10.1.6. Պայմանագիրը կորցնելու դեպքում՝ դիմումի հիման վրա ստանալ կրկնօրինակը:

10.2. Ապահովադիրը և/կամ Ապահովագրված անձը (Շահառուն) պարտավոր է՝

10.2.1. Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետ(ներ)ում վճարել ապահովագրավճարը,

10.2.2. Պատահար տեղի ունենալու դեպքում՝ Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով հայտնել Սպասարկող ընկերությանը (Ապահովագրողին) պատահարի մասին,

10.2.3. Ներկայացնել համապատասխան փաստաթղթերը՝ ապահովագրական հատուցում ստանալու համար,

10.2.4. Կատարել ՀՀ օրենսդրությամբ, Կանոններով և Պայմանագրով սահմանված այլ պարտավորությունները:

10.3. Ապահովագրողն իրավունք ունի՝

10.3.1. Ստուգել Ապահովադիրի կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև հետևել և պահանջել Ապահովադիրի կողմից Պայմանագրի պահանջների կատարումը.

10.3.2. Պայմանագիր կնքելուց առաջ պահանջել համապատասխան փաստաթղթեր.

10.3.3. Ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու համար կասեցնել կամ երկարաձգել ապահովագրական հատուցման գործընթացը, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց պատճառով Ապահովագրողն անհրաժեշտ է համարում ստանալ հավելյալ տեղեկություն Ապահովագրական պատահարի վերաբերյալ.

10.3.4. իրականացնել Ապահովադիրի (Ապահովագրված անձի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղարկման, պայմանագրի բխող իր իրավունքների իրականացման նպատակներով.

10.3.5. մերժել ապահովագրական հատուցման իրականացումը, եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը) չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել Կանոններով և Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները, ինչպես նաև եթե Ապահովագրված անձը Պայմանագրի կնքման պահին գտնվել է ՀՀ տարածքից դուրս (բացառությամբ՝ Պայմանագրի ավարտով պայմանավորված դրա վերակնքման դեպքի):

10.4. Ապահովագրողը պարտավոր է՝

10.4.1. Ապահովադիրին ծանոթացնել Կանոններին և տրամադրել օրինակը,

10.4.2. Ապահովադիրի պահանջով օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով փոփոխություններ կատարել Պայմանագրում, եթե դրա գործունեության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի փոփոխություն,

10.4.3. Կանոններով սահմանված ժամկետներում և կարգով կայացնել ապահովագրական հատուցման վճարման կամ մերժման մասին որոշում:

10.5. Ապահովադիրը, Ապահովագրողը, Ապահովագրված անձը պարտավոր են չհրապարակել, չբացահայտել և/կամ երրորդ անձին չտրամադրել իրենց հայտնի դարձած

բժշկական, ֆինանսական և ապահովագրական գաղտնիք հանդիսացող և/կամ պարունակող ցանկացած տեսակի տեղեկություն, բացառությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, և իրենց հայտնի դարձած տեղեկությունը չօգտագործել սեփական և/կամ երրորդ անձանց շահերին, ինչպես նաև միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար:

10.6. Ապահովագրիչն ու Ապահովագրողն ունեն օրենքով, Կանոններով և Պայմանագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

ԲԱԺԻՆ 11. ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ/ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

11.1. Ապահովագրողն իրավասու է ՀՀ գործող օրենսդրությամբ, Պայմանագրով և Կանոններով նախատեսված բոլոր ծանուցումները (որոշումներ, փաստաթղթեր և այլ նյութեր) Կանոններով և Պայմանագրով նախատեսված անձանց հանձնել հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

11.1.1. առձեռն՝ ստացման մասին ստորագրությամբ,

11.1.2. Ապահովագրողի, Ապահովագրի (Շահառուի)՝ Պայմանագրում նշված հասցեով պատվիրված նամակով ուղարկելու միջոցով,

11.1.3. իր էլեկտրոնային փոստի հասցեից Ապահովագրի՝ Պայմանագրում նշված կամ Ապահովագրողին գրավոր ձևով տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով,

11.1.4. տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում մուտքագրելու միջոցով՝ անձի համաձայնության առկայության դեպքում:

11.2. Ապահովագրիչը (Շահառուն) Կանոններով և Պայմանագրով ներկայացման ենթակա դիմումները, այդ թվում՝ հայտային դիմում, ծանուցումները, փաստաթղթերը և այլ նյութերը Ապահովագրողին կարող են ներկայացվել հետևյալ եղանակներով.

11.2.1. եթե նախատեսված է փաստաթղթի բնօրինակի կամ դրա նոտարական կարգով հաստատված պատճենի ներկայացում, ապա այն առձեռն ներկայացվում է Ապահովագրողի գրասենյակ կամ ուղարկվում Ապահովագրողի պաշտոնական փոստային հասցեին.

11.2.2. եթե նախատեսված է փաստաթղթի պատճենի (լուսապատճենի) ներկայացում, ապա այն առձեռն ներկայացվում է Ապահովագրողի գրասենյակ կամ Ապահովագրողի համաձայնությամբ ուղարկվում Ապահովագրողի էլեկտրոնային փոստի հասցեին, կամ բջջային հավելվածով (Viber, WhatsApp, այլ)՝ Ապահովագրողի հեռախոսահամարին, կամ մուտքագրվում տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում:

11.3. Սույն գլխում նշված որևէ եղանակով կատարված բոլոր ծանուցումները, ներկայացված դիմումները, փաստաթղթերը և այլ նյութերը համարվում են պատշաճ ուղարկված և/կամ ստացված Ապահովագրողի, Ապահովագրի (Շահառուի) կողմից, և վերջինների կողմից որոշակի գործողություններ կատարելու համար սահմանված ժամկետները ծանուցող անձի կողմից սկսվում են հաշվարկվել՝

11.3.1. ստորագրությամբ առձեռն հանձնվելու դեպքում՝ հանձնելու օրվան հաջորդող օրվանից,

11.3.2. պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ նամակի ստացման կամ որևէ հիմքով նամակը փոստի ծառայության կողմից վերադարձման պահին հաջորդող օրվանից,

11.3.3. էլեկտրոնային փոստի հասցեով կամ բջջային հավելվածով (Viber, WhatsApp, այլ) ուղարկվելու դեպքում՝ ուղարկման օրվան հաջորդող օրվանից,

11.3.4. տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում մուտքագրվելու դեպքում՝ մուտքագրման օրվան հաջորդող օրվանից:

ԲԱԺԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄԸ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻՑ ՀԵՏՈ

12.1. Ապահովագրի (Ապահովագրված անձը), այն պահից սկսած, երբ իրեն հայտնի է դարձել Պայմանագրով նախատեսված Ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին, մինչև բժշկական հաստատություն դիմելը, պարտավոր է անհապաղ՝ առաջին իսկ հնարավորության դեպքում, այդ մասին տեղեկացնել Սպասարկող ընկերությանը՝ զանգահարելով Պայմանագրում նշված հեռախոսահամարով (հեռախոսահամարներից որևէ մեկով), և պատասխանել Սպասարկող ընկերության հեռախոսային հարցադրումներին՝ հայտնելով.

12.1.1. Ապահովագրված անձի անունը, ազգանունը,

12.1.2. Պայմանագրի համարը,

12.1.3. տեղի ունեցած պատահարի հանգամանքների նկարագրությունը և պահանջվող օգնության բնույթը,

12.1.4. Ապահովագրված անձի գտնվելու վայրը և հետադարձ կապի համար կոնտակտային հեռախոսի համարը:

12.2. Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովագրված անձն Ապահովագրական պատահարի հետևանքով հայտնվել է անգիտակից վիճակում կամ այնպիսի վիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողին Ապահովագրական պատահարի մասին անհապաղ տեղեկացնելը: Այսպիսի հանգամանքները պետք է հիմնավորված լինեն համապատասխան ապացույցներով, փաստաթղթերով, որոնք պետք է ներկայացվեն Ապահովագրողին:

12.3. Պատահարի մասին տեղեկացնելուց հետո Ապահովագրի (Ապահովագրված անձը) Սպասարկող ընկերության (Ապահովագրողի) հետ պետք է համաձայնեցնի բժշկական, բուժօրհանսպորտային, հայրենադարձության և իրավաբանական խորհրդատվության հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև հետևի Սպասարկող ընկերության բոլոր հրահանգներին:

12.4. Եթե Ապահովագրված անձը բժշկական և այլ ծախսերը վճարել է ինքնուրույն, ապա հատուցում ստանալու համար Ապահովագրական պատահարից հետո եռամսյա ժամկետում պետք է Ապահովագրողին ներկայացնի սահմանված ձևով գրավոր դիմում՝ նշելով պահանջվող տվյալները, մասնավորապես՝ պատահարի տեղի ունենալու վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև դիմումին կցի պատահարի հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

12.5. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին ներկայացման ենթակա փաստաթղթերն են.

12.5.1. պատահարի առաջացման մասին գրավոր դիմում.

12.5.2. դիմում՝ Սպասարկող ընկերությանը չդիմելու պատճառների հիմնավորմամբ, եթե Ապահովագրված անձը չի դիմել Աջակցության կենտրոն.

12.5.3. էլեկտրոնային հաշվառման համակարգում Պայմանագրի տվյալների բացակայության դեպքում՝ Պայմանագրի բնօրինակ.

12.5.4. բժշկական փաստաթղթերի բնօրինակներ, որոնք ներառում են տեղեկություններ բժշկական օգնությանը դիմելու ամսաթվի, Ապահովագրված անձի ախտորոշման, բժշկական օգնության դիմելու պահին նրա առողջական վիճակի և կատարված բժշկական

մանիպուլյացիաների (տրամադրված դեղորայքների) վերաբերյալ՝ դրանք ըստ ամսաթվերի և ըստ առանձին բժշկական ծառայությունների արժեքների տարանջատմամբ.

12.5.5. Ապահովագրված անձի կատարած ծախսերը և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի վճարման փաստը հաստատող փաստաթղթեր՝ նշելով մատուցված ծառայությունների ամսաթիվը և անվանումները, Ապահովագրված անձի ազգանունը, անունը, հայրանունը.

12.5.6. դժբախտ պատահարը կամ վնասվածքը և կատարվածի հանգամանքները հավաստող պաշտոնական արձանագրություն կամ տեղեկանք.

12.5.7. փաստաթղթեր, որոնք հավաստում են բժշկական ծառայությունների համար կատարված վճարումները՝ վճարման արժույթի և ամսաթվի նշումով.

12.5.8. սահմանված ախտորոշման հետ կապված կամ դեղատոմսերի հավելվածով, կամ բժշկական արձանագրության (դեղատոմսի) մեջ նշումով բժշկի կողմից դուրս գրված դեղորայքների ձեռք բերման համար կատարված վճարումների դեղատնային չեկերը (վճարման հաշիվները).

12.5.9. Ապահովագրված անձի մահվան դեպքում՝

12.5.9.1. իրավահաջորդությունը հիմնավորող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի բնօրինակներ կամ դրանց՝ նոտարապես հաստատված պատճեններ,

12.5.9.2. Ապահովագրված անձի մահվան վկայականի բնօրինակ,

12.5.9.3. դեպքն արձանագրած լիազոր պետական մարմնի եզրակացություն, արձանագրություն, որոշում, դատավճիռ և/կամ վճիռ, իսկ եթե սույն ենթակետով սահմանված փաստաթղթերում դատաբժշկական փորձաքննության (եզրակացության) արդյունքների վերաբերյալ վկայակոչում չկա, նաև դատաբժշկական փորձաքննության եզրակացություն.

12.5.10. փաստաթղթեր, որոնք հավաստում են Ապահովագրողի կամ նրա ներկայացուցչի հետ հեռախոսային խոսակցությունների վարման (էլեկտրոնային հաղորդագրությունների ուղարկման) փաստը.

12.5.11. Ապահովագրողի պահանջի դեպքում՝ լրացուցիչ անհրաժեշտ տեղեկատվություն Ապահովագրված անձի առողջական վիճակի մասին (ամբուլատոր կամ ստացիոնար հիվանդի բժշկական քարտ և այլ առաջնային բժշկական փաստաթղթեր): Ապահովագրողն իրավունք ունի նաև ցանկացած բժշկական ձեռնարկությունից ինքնուրույն կատարել հարցումներ և ստանալ բժշկական փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ապահովագրական հայտի վերջնական կարգավորման համար.

12.5.12. Ապահովագրողի պահանջի դեպքում՝ արտասահմանյան անձնագիր՝ ՀՀ պետական տարածքն անցնելու և վերադառնալու մասին սահմանապահ հսկողության նշումով, ինչպես նաև այլ փաստաթղթեր՝ հյուրանոցի հաշիվներ, ավիատոմսեր և այլն, որոնք հաստատում են Ապահովագրված անձի ապահովագրության տարածքում գտնվելու փաստը և ժամկետները.

12.5.13. բացի ռուսերեն և անգլերեն լեզուներից, այլ օտար լեզուներով կազմված վերոնշյալ փաստաթղթերը պետք է ներկայացվեն համապատասխան հաստատում ունեցող թարգմանություններով: Ապահովագրողի (Շահառուի) կողմից փաստաթղթերի թարգմանության համար կատարված՝ Ապահովագրողի հետ համաձայնեցված ծախսերը ենթակա են հատուցման Ապահովագրողի կողմից:

12.6. Այն դեպքում, երբ Ապահովագրողը (Շահառուն) ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումին կից չի ներկայացնում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, Ապահովագրողը պարտավոր է դիմումի ստացման օրը կամ դրան հաջորդող մեկ օրվա ընթացքում Ապահովագրողին (Շահառուին) տրամադրել վերջինիս կողմից ներկայացման

ենթակա, բայց դեռևս չներկայացված փաստաթղթերի ցանկը: Սույն կետով նախատեսված պակաս փաստաթղթերը պետք է Ապահովագրողին ներկայացվեն փաստաթղթերի ցանկը ստանալուց հետո՝ եռամսյա ժամկետում:

12.7. Դիմումները, պատասխանները կամ փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ տեղեկացումները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում, համապատասխան ժամկետները կետանցաձև անձը զրկվում է դիմումը, փաստաթղթերը կամ պատասխանը ներկայացնելու արդյունքում առաջացող իրավունքից և/կամ կրում է չտեղեկացման համար սահմանված բացասական հետևանքները, բացառությամբ այն դեպքերի, երբ ժամկետի բացթողումը Կանոններով սահմանված հիմքերով հարգելի է ճանաչվել Ապահովագրողի կողմից:

12.8. Սույն Կանոններով ժամկետի բացթողումը հարգելի է ճանաչվում, եթե ժամկետը բաց թողած անձն ապացուցում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության փաստը.

12.8.1. ժամկետի բացթողման պատճառ է հանդիսացել տվյալ անձի անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում գտնվելը (<< տարածքում չգտնվելը), որն անհնարին է դարձրել նրա կողմից սահմանված ժամկետում դիմումի, պատասխանի կամ փաստաթղթերի ներկայացումը կամ տեղեկացման պարտավորության կատարումը, ներառյալ՝ ներկայացման ենթակա իրավասու պետական մարմնի ակտն ընդունված և/կամ ուժի մեջ մտած չլինելու պատճառով.

12.8.2. անձը ներկայացրել է դիմումը կամ պատասխանը, կամ կատարել տեղեկացման պարտավորությունը Կանոնների 12.8.1 ենթակետով նախատեսված հանգամանքները վերանալու մասին իրեն հայտնի դառնալուց հետո՝ համապատասխան գործողության կատարման համար սույն Կանոններով սահմանված ժամկետում:

12.9. Փաստաթղթերի ներկայացման ժամկետի բացթողումը Ապահովագրողի կողմից կարող է հարգելի ճանաչվել այն դեպքում, երբ Ապահովագիրը (Շահառուն) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին: Նշված դեպքերում Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է փաստաթղթերի ներկայացման ժամկետը երկարաձգել մինչև վեց ամիս ժամկետով:

ԲԱԺԻՆ 13. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ

13.1. Ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը հաստատվելու դեպքում Ապահովագրողն ապահովագրական հատուցումն իրականացնում է հետևյալ չափերով (եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով).

13.1.1. հիվանդասենյակում և/կամ վերակենդանացման բաժանմունքում գտնվելու ծախսերի գծով հատուցումը՝ օրական ոչ ավել, քան 500 (հինգ հարյուր) պ/մ չափով, առավելագույնը՝ 10 (տասը) օրվա համար.

13.1.2. ատամնաբուժական օգնություն ցուցաբերելու բժշկական ծախսերի գծով հատուցումը՝ յուրաքանչյուր ատամի համար ոչ ավել, քան 100 (մեկ հարյուր) պ/մ չափով, բայց մեկ ապահովագրական պատահարի շրջանակներում՝ երկու ատամից ոչ ավել.

13.1.3. Կանոնների 4.2.1 կետում նշված բոլոր ենթակետերի համար՝ Ապահովագրված անձի կյանքին վտանգ սպառնացող դեպքերում բժշկական օգնության տրամադրման հետ կապված հատուցումը՝ ոչ ավել, քան 500 (հինգ հարյուր) պ/մ չափով.

13.1.4. ուշաթափության, օրթոստատիկ թերճնշումների, գիտակցության կորստի և սինկոպեի դեպքերը, ինչպես նաև դրանց հետևանքով առաջացած մարմնական վնասվածքները

և մահը, ենթակա են հատուցման՝ ոչ ավել, քան 500 (հինգ հարյուր) պ/մ չափով, ընդ որում՝ Ապահովագրված անձի առողջական վիճակի հետ կապված վերոնշյալ դեպքերը պետք է արձանագրված լինեն շտապ բժշկական օգնության ծառայության աշխատակիցների կամ լիցենզավորված բուժաշխատողի կողմից.

13.1.5. դժբախտ պատահարի հետևանքով առաջացած տրավմատոլոգիական վնասվածքների վիրաբուժական բուժման ծախսերի գծով հատուցումը՝ ոչ ավել, քան 5 000 (հինգ հազար) պ/մ չափով.

13.1.6. Ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված անձի մահվան դեպքում՝ վերջինիս աճյունի նրա մշտական բնակության վայր վերադարձման ծախսերի գծով հատուցումը՝ ոչ ավել, քան 10 000 (տասը հազար) պ/մ չափով.

13.1.7. բժշկական ցուցմամբ նշանակված բժշկական պարագաների համար ծախսերի գծով հատուցումը՝ ոչ ավել, քան 1 000 (հազար) պ/մ չափով.

13.1.8. խնամքի ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների համար ծախսերի գծով հատուցումը՝ ոչ ավել, քան 500 (հազար) պ/մ չափով, 1 օրվա համար ոչ ավել, քան 50 (հիսուն) պ/մ.

13.1.9. ապահովագրության ժամկետում տեղի ունեցած այնպիսի պատահարի դեպքում, որն ունի շարունակություն ապահովագրության ժամկետի ավարտից հետո, ապահովագրության ժամկետի ավարտից հետո ապահովագրության տարածքում մատուցվող ծառայությունների համար կատարված ծախսերի գծով վճարվում է հատուցում՝ ոչ ավել, քան 1 000 (հազար) պ/մ չափով.

13.1.10. Պայմանագրով հստակ չարձանագրված օրերով մեկ ամսվա ընթացքում 8 օր ապահովագրված օրերի քանակով ապահովագրություն ձեռք բերած Ապահովագրված անձի համար յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար հատուցման առավելագույն սահմանաչափը սահմանվում է 1 000 (մեկ հազար) պ/մ.

13.1.11. յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի հետևանքով վճարվում է միայն 250 (երկու հարյուր հիսուն) պ/մ չափը գերազանցող վնասը, եթե Ապահովագրված անձի կողմից կատարված բժշկական և/կամ բուժօրհանսպորտային ծախսերը համաձայնեցված չեն եղել Ապահովագրողի հետ, բացառությամբ՝ երբ Ապահովագրված անձի առողջական վիճակը թույլ չի տվել կապվել Սպասարկող ընկերության հետ՝ բժշկական և/կամ բուժօրհանսպորտային օգնությունը և դրա հետ կապված ծախսերը համաձայնեցնելու նպատակով, ընդ որում՝ Ապահովագրողին կամ Սպասարկող ընկերությանը հեռախոսազանգով դեպքի վերաբերյալ տեղեկացումը բավարար չէ ծախսերը հատուցման ենթակա ճանաչելու համար: Ապահովադրին (Ապահովագրված անձին) մատուցած յուրաքանչյուր ծառայություն և դրա համապատասխան արժեքը պետք է համաձայնեցված լինի Ապահովագրողի հետ կամ անմիջապես, կամ Սպասարկող ընկերության միջոցով: Բժշկական և բուժօրհանսպորտային ծախսերը համարվում են համաձայնեցված, եթե դրանց ծավալի և արժեքի վերաբերյալ առկա է գրավոր կամ հեռախոսային տեղեկացում Ապահովագրողին կամ Սպասարկող ընկերությանը և պատասխան գրավոր հաստատում Ապահովագրողի կողմից դրանց հատուցման վերաբերյալ:

13.2. Ապահովագրական հատուցման հաշվարկը կատարվում է Կանոնների 12.5 կետում նշված փաստաթղթերի բնօրինակների հիման վրա՝ դիմումի ներկայացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից արտարժույթի նկատմամբ սահմանված փոխարժեքին համապատասխան:

13.3. Ապահովագրողն Ապահովադրի (Շահառուի) կողմից ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է պատճառաբանված որոշում՝ ապահովագրական հատուցումն իրականացնելու կամ մերժելու

վերաբերյալ, իսկ որոշում կայացնելուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում այն տրամադրում է Ապահովադիրին, Շահառուին:

13.4. Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցումը:

13.5. Հատուցման վճարումը կատարվում է գումարի փոխանցումով ստացողի բանկային հաշվին: Բանկային հաշիվը կարող է նշվել ինչպես Ապահովագրական պատահարի մասին Ապահովագրողին ներկայացված դիմումի մեջ, այնպես էլ ներկայացվել առանձին դիմումով:

13.6. Հատուցումը վճարելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու ժամկետները Ապահովագրողի կողմից կարող են հետաձգվել, եթե Ապահովագրական պատահարի հետ կապված փաստերը ճշգրտելու համար իրավական ակտերով սահմանված հիմքերով նշանակված է լրացուցիչ ստուգում/փորձաքննություն, նախաձեռնվել է քրեական վարույթ կամ դատական գործընթաց՝ մինչ նշված գործընթացների ավարտը, կամ առկա են Կանոններով հատուցման վճարմանը խոչընդոտող այլ իրավիճակներ:

13.7. Ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազեցվում է հատուցված գումարի չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական հատուցում վճարելու մասին Ապահովագրողի որոշումը կայացնելու ամսաթվից:

ԲԱԺԻՆ 14. ՀՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

14.1. Ապահովագրության Պայմանագրում կողմերը կարող են սահմանել վնասի հատուցմանը Ապահովադիրի մասնակցության չափը՝ չհատուցվող գումար:

14.2. Հհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական: Այն սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային կամ բացարձակ դրամական արտահայտությամբ:

14.3. Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով կամ չհատուցվող գումարը հավասարվում է 0-ի:

14.4. Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը նվազեցվում է չհատուցվող գումարի չափով:

ԲԱԺԻՆ 15. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՅԻՆ)

15.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադիրին (Ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա կամ Շահառուի պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:

15.2. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերը և այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

15.3. Եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից,

կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովագրի (Ապահովագրված անձի, Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավելորդ վճարված հատուցման գումարը:

ԲԱԺԻՆ 16. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

16.1. Կանոններով և Պայմանագրով սահմանված պարտավորությունները մասնակի կամ լրիվ չկատարելու դեպքում Պայմանագրի կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է անհաղթահարելի ուժի, մասնավորապես՝ ջրհեղեղի, պայթյունի, հրդեհի, երկրաշարժի, այլ տարերային աղետների, պատերազմի, ռազմական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ժողովրդական հուզումների, ահաբեկչության, գործադուլների, արտակարգ դրության, տնտեսական շրջափակման, հաղորդակցման միջոցների աշխատանքի դադարեցման, կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելանքների կամ նման այլ իրադարձությունների:

16.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը կամ դրա հետևանքները երկարաձգվում են 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Պայմանագրի մյուս կողմին:

16.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Կանոններով և Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների իրականացմանն է խոչնդոտում նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 17. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

17.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Ապահովագիրը (Շահառուն) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, դրանից բխող իր իրավունքներն իրականացնելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու, Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովագիրը համաձայն է, որ Ապահովագրողը տրամադրի Շահառուին՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝ ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողը ունի համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնազերծումից) պաշտպանությունը:

17.2. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովագրի (Շահառուի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական

կենսաչափական և հատուկ տվյալները (այդ թվում՝ առողջական վիճակի, ռասայական և/կամ ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ծայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ապահովադրի (Շահառուի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ծայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը, բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

17.3. Կետ 17.1-ում նշված Ապահովադրի (Շահառուի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Ապահովագրության պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի (Շահառուի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

17.4. Ապահովադրից (Շահառուից) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալները դադարում են մշակվել Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

17.5. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագիր կնքելով, Ապահովադիրը (Շահառուն) հավաստում է, որ տեղեկացված է՝ 17"1 կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալները օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովադիրը (Շահառուն) նաև հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ 18. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

18.1. Կանոնների և դրա թարգմանությունների միջև տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է Կանոնների հայերեն տեքստին:

18.2. Պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

18.3. Տարաձայնությունների դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն: